



ԵՐԿՈՒՇԱՐԹԻ, 13 ՅՈՒՆԻՍ, 2025

ՏԵՐՈՒՄԱՆ ԱՊՈԹՔ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւն Հօր Յիսուս, ԿՈՒՐ ԻՆՃ Իմաստութիւն վբարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. Ի չար խորհրդոց, Ի բանից եւ Ի գործոց փրկեալս ԿԻՍ. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

ՍԱՂՄՈՍ 119

ԿԸ ՍԻՐԵՄ ՔՈՒ ՕՐԷՆՔԴ

Ի շիտղները կը հալածեն զիս՝ առանց պատճառի,
բայց իմ սիրտս միայն խօսեցերէդ կը դողայ:
Քու խոստումովդ կը ցնծամ,
այն մարդուն պէս՝ որ մեծ գանձ կը գտնէ:
Կ'ատեմ ստութիւնը եւ կը զգուիմ անկէ, բայց կը սիրեմ Օրէնքդ:
Օրը եօթն անգամ կ'օրհներգեմ Քեզ,
արդար դատաստաններուդ համար:
Օրէնքդ սիրողները կատարեալ խաղաղութիւն պիտի գտնեն,
խոչընդոտի բնաւ պիտի չհանդիպին:
Փրկութեանդ կը սպասեմ, Տէր,
եւ կը գործադրեմ պատուէրներդ:
Պատուիրաններդ կը կատարեմ,
եւ անչափօրէն կը սիրեմ զանոնք:
Հրահանգներդ եւ պատուիրաններդ կը պահեմ.
ամբողջ կեանքս բաց է աչքերուդ առջեւ:

ՇԱՐԱԿԱՆ

Յոյս իմեա դու տէր քաւիչ յանցանաց իմոց.

մի անտես առնէր զբըղխումն արտասուաց իմոց. ողորմեա ինձ աստըլած:

ԱՊՈԹՔ

Տէր Աստուած գթութեան, փրկութեան եւ ողորմութեան, քաւութեան եւ նորոգութեան, բժշկութեան եւ առողջութեան, լուսաւորութեան եւ կենդանոթեան, բարութեան եւ անմահութեան, յիշէ մեզ երբ գաս քու թագաւորութեամբդ: Քեզի կը պաղատինք՝ քեզի խաչակից եղողին հետ, յաւիտեանս. ամէն:

ՇԱՐԱԿԱՆ - ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾ

Սուրբ Աստուած, սուրբ եւ հօգօր, սուրբ եւ անմահ, որ ծնար եւ յայտնեցար վասն մեր, ողորմեա մեզ: (X 3)

Փրկել զմեզ ի փորձութենէ եւ յամենայն վրանգից մերոց:

Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք: Վասն լսելի լինելոյ Տեառն Աստուծոյ ձայնի աղաչանաց մերոց՝ բարեխօսութեամբ սուրբ Աստուածածնին, եւ իջանելոյ ի վերայ մեր ողորմութեան եւ գթութեան Տեառն Աստուծոյ: Ամենակալ Տէր Աստուած մեր, կեցո՛ւ եւ ողորմեա:

ՇԱՐԱԿԱՆ-ԱՂՈՐԲ

Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:

Վմենասուրբ Երրորդութիւն, տուր աշխարհիս խաղաղութիւն:

Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցէրոց արքայութիւն:

Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւէն ես նեղէրոց:

Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:

ՍԱՂՍՈՍ 75

ԱՍՏՈՒԱԾ Է ԱՇԽԱՐՀԻ ԴԱՏԱԻՈՐԸ

Գոհութիւն կը յայտնենք Քեզի, ով Աստուած,

գոհութիւն կը յայտնենք Քեզի:

Կը հռչակենք Քու անունդ,

եւ կը պատմենք սփանչելի գործերդ:

«Երբոր որոշած ժամանակս գայ,

եւ արդարութեամբ պիտի դատեմ, – կ'ըսէ Աստուած:

Երբ աշխարհը եւ անոր բնակիչները սասանին,

ես հաստատուն պիտի պահեմ երկրին հիմերը:

Սնապարծներուն կ'ըսեմ. – "Կը բաւէ պարծենալ".

ամբարիշտներուն կ'ըսեմ. – "Կը բաւէ հպարտանալ,

դադրեցուցէ՛ք ձեր ամբարտաւանութիւնը, գոռոզութեամբ մի խօսի՛ք»:

Արդարեւ դատաստանը ոչ արեւելքէն կու գայ, ոչ արեւմուտքէն,

ոչ հարաւէն, ոչ ալ հիւսիսէն. այլ՝ Աստուած է Դատաւորը,

որ մէկը կը խոնարհեցնէ ու միւսը կը բարձրացնէ:

Որովհետեւ Տիրոջ ձեռքին բաժակ մը կայ՝

բարկութեան թունդ գինիով լեցուն.

այդ բաժակէն խմել կու տայ երկրի բոլոր ամբարիշտներուն,

որոնք գայն պիտի փամբն իր մրուրով միասին:

Գալով ինձի, ես յաւիտեան պիտի ցնծամ,

երգով պիտի ներբողեմ մեր հայրերուն Աստուածը:

Ամբարիշտները իրենց ամբողջ հպարտութեամբ պիտի խորտակուին,

մինչ արդարները գօրութենէ գօրութիւն պիտի բարձրանան:



ԱՍՏՈՒԿԾ Է ԱՇԽԱՐՀԻ ԴԱՏԱԲՈՐԸ 75:1-10

Յիշեցման կարգով, 75-րդ Սաղմոսը Ասաֆի ժողովածուէն, կու գայ յիշեցնելու թէ աշխարհի Դա-տաւորը Աստուած Ինք է: Ոչ մեծ պատուօթիւնները, ոչ մասնագէտ դատաւորը, ոչ ոք, բայց միայն ու միայն Աստուած Ինք է Դատաւորը: Մարդ արարածը, որքան ալ ինքզինքին փայ այն հանգամանքը, թէ ինք իշխանութիւն ունի դատելու, մեծապէս կը սխալի: Յիշենք, Պիղատոսի եւ Յիսուսի հանդիպումը, երբ Պիղատոս կը ըսէ Յիսուսի. «Ձե՛ս գիտեր՝ թէ իշխանութիւն ունիմ քեզ խաչ հանելու, ինչպէս նաեւ՝ քեզ աղար արձակելու: Յիսուս կը պատասխանէ. «Իմ վրաս ոչ մէկ իշխանութիւնալիքի ունենայիր՝ եթէ քեզի վերէն՝ Աստուծմէ փրուած չըլլար» Յովի 19:10: Այս Սաղմոսը նաեւ իշեցում է գգուշանալու հպարտութենէ: Այն առաջին մեղքը, որ նաեւ ամէն Կիրակի խոստովանութեան ժամանակը կը յիշենք ու կը խոստովանուինք ըսելով, եօթը մահացու մեղքերուն առաջինը՝ հպարտութեամբ: Հպարտութիւնը այն մեղքն է, երբ ամէն ինչ մեզի կը վերագրենք, «Մենք ըրինք», «Մենք շինեցինք», «Ես ըրի»: Այն նոյն քրքիրը, որ Դրախ-րի պարտեզին մէջ Չարը գալով հրամցուց Եւային, ըսելով, «Կեր, չես մեռնիր, աստուածներու պէս կըլ-լաս»: Այլ ընդհակառակը, նախ շնորհակալութիւնյայտնելու Աստուծոյ, անբողոքութեամբ Իրեն յանձ-նուելու, խոնարհեցնելու մեր անձերը, վստահելու Աստուծոյ անբողոքութեամբ, Աստուծոյ երկիւղը ունե-նալու, փառաւորելու գԱստուած եւ յոյսով ապրելու եւ սպասելու արդարութեան պսակին: Այսպէս որ կը մրաժենք, յաճախ կու գանք ըսելու, ուրեմն ուր մնաց մեր բաժինը: Հա թէ ինչ կը սորվեցնէ Քրիստոս. «Ով որ ինքզինք կը բարձրացնէ, պիտի խոնարհի, իսկ ով որ ինքզինք կը խոնարհեցնէ, պիտի բարձրա-նայ»: Թող որ Աստուած Ինք արդարօրէն փայ այդ բարձրացումը, որովհետեւ յաճախ, փակաւին չըսելու համար միշտ, մեր արժեւորումներն ու գնահատանքը խախտու ան, եւ անարդար:

Ամէն բանէ առաջ Ասաֆ գոհութիւն կը յայտնէ Աստուծոյ Իր փրուած բոլոր բարիքներուն համար: Այն բոլոր բարիքները, որ մենք կը վայելենք մեր ամենօրեայ կեանքին մէջ, ուրիշ բան չեն եթէ ոչ ի վե-րուստ փրուած, Աստուծմէ փրուած բարիքներ: Բայց ցաւօք սրտի, յաճախ մեզի կը վերագրենք այդ բարիքները, մեր ձեռքբերումներուն, մեր յաջողութեանց, մեր վարպետութեան, փակաւին, չըսելու համար, գողութիւնը փոխարինելով ճարպիկութեան, աչքբացութեան, սրախօսութիւնը լեզուանի ըլլալուն: Անոր համար ալ, այս անգամ, հետաքրքրական է, որ այդ բոլոր բարիքները մեզի կը վերագրենք, իսկ երբ յանկարծ չարիք մը պատահի, մեր սլաքը կը լուրդենք դէպի Աստուծոյ: Ընդհակառակը, Դաւիթ իր կեանքի օրինակով, ամենադաժան ու դժուարին պահուան մէջ, փառք եւ գոհութիւն կը յայտնէ Աստուծոյ: Երեւոյթ մը, որ մի գուցէ դժուար ըմբռնենք, թէ ինչպէս կարելի է հալածանքի, նեղութեան, դժուարութեան պահուն փառք փալ Աստուծոյ: Պօղոս Առաքեալ ինք եւս, իր կեանքի օրինակովը կու գայ յիշեցնելու Թեսաղոնի-կեցիներուն. «Ամէն բանի համար շնորհակալ եղէք Աստուծոյ» Ա Թես 5:18: Ահա որքան վրանգաւոր վի-ճակի մէջ կրնանք ըլլալ, եթէ գգուշ չըլլանք, անմիջապէս հպարտութիւնը կու գայ փեղ գրնելու մեր սրտերուն մէջ:

Այդ մեղքին մէջ չիյնալու համար, Ասաֆ կը յիշեցնէ, թէ պէտք է Աստուծոյ կամքին ենթարկուիլ, որովհետեւ Ինքն է Դատաւորը, որ երբոր որոշած ժամանակը հասնի արդարութեամբ պիտի դատէ: Այս փողը կը յիշեցնէ երկու բան: Աստուծոյ Դատաւոր ըլլալու հանգամանքը, եւ որոշուած ժամանակը: Յա-ճախ մենք կը դժգոհինք, կը նեղուինք այս կամ այն երեւոյթին համար, թէ Աստուած ո՛ր է եւ կամ ինչո՞ւ չի միջամտեր: Այս փողը կու գայ յիշեցնելու թէ որոշած ժամանակ մը կայ: Յիսուս զայն կը կոչէ հունձքի ժամանակ, երբ որոմի եւ ցորենի առակը կը պատմէր: Աստուած նաեւ Ինք է երկրին հիմերը պահողը: Առիթով մը կը յիշեցնէ Յոբին, ըսելով. «Ո՛ր էիր, երբ երկրին հիմերը կը դնէի»: Դանիէլ մարգարէն առի-թով մը կը ըսէ Նաբոգոդոնոսոր թագաւորին. «Աստուծոյ անունը յաւիտեանս յաւիտենից օրինեալ ըլլայ, որովհետեւ իմաստութիւնն ու գորութիւնը անորն են: Արեւներն ու ժամանակները փոխողը, թագաւոր-ներ վերցնողն ու թագաւորներ հաստատողը անիկա է» 2:20-21: Նաեւ Աստուծոյ կամքին ենթարկուիլ կը նշանակէ համբերութեամբ սպասել Աստուծոյ ժամանակին:

Ասաֆ կ'անցնի բուն նիւթին՝ պարծենալ ու հպարտանալ: Պարծանքն ու հպարտանքը, այն նոյն մեղքը այն ինչ Չարը ունեցաւ իր սրտին մէջ գրաւելու Աստուծոյ փեղը: Հպա-տանալ կը նշանակէ, այն ինչ որ կը վերաբերի Աստուծոյ, քեզի վերագրել: Յովհաննէս Առաքեալ Աւերաբանիչ ինք եւս կը յիշեցնէ ըսելով. «Աշխարհին յարուկ բաներն են՝ մարմնի ցանկութիւնը, աչքին փեսածը ունենալու ցանկութիւնը եւ երկրաւոր ինչքերով հպարտանալը, որոնք Հօրմէն չեն գար, այլ՝ այս աշխարհէն: Գիտցէք սակայն, աշխարհն ալ կ'անցնի, աշխարհային ցանկութիւններ ալ. բայց Աստուծոյ կամքը կարարողը ինք՝ յաւի-տեան կը մնայ» Ա Յովի 2:16-17: Իսկ հպարտութեան փոխարէն,

խոնարհութիւնը: Խոնարհութիւն, ոչ սակայն, աշխարհիկ հասկացողութեամբ, ուր կը ներկայացուի որպէս խողճութիւն, Գեորգի Պետրոս Առաքեալ կ'ըսէ. «Աստուծոյ հօգի ձեռքին Գրայն խոնարհեցէք, որպէսզի երբ յարմար ժամանակը գայ՝ ձեզ բարձրացնէ» Ա Պետ 5:6: Այս խոնարհութիւնը նաեւ մեզ կ'առաջնորդէ ներում ստանալու, երբ խոնարհութեամբ կը դիմենք Աստուծոյ մեր մեղքերուն քաւութեան եւ թողութեան համար, ոչ միայն իբրեւ անհար, այլ նաեւ իբրեւ ազգ: «Իմ անունովս կոչուած ժողովուրդս էթէ խոնարհին ու աղօթք ընեն ու իմ երեսս խնդրեն եւ իրենց չար ճամբաներէն դառնան, ես ալ երկիւնքէն պիտի լսեմ ու անոնց մեղքը ներեմ ու անոնց երկիրը բժշկեմ» Բ Մնացորդաց 7:14:

Ասա՛ք դարձեալ կը կրկնէ ըսելով. «Դաբաստանը ոչ արեւելքէն է, ոչ արեւմուտքէն, ոչ հարաւէն, ոչ ալ հիւսիսէն, այլ Աստուած է Դաբաստորը, որ մէկը կը խոնարհեցնէ ու միւսը կը բարձրացնէ», Իր կամքին եւ Իր ծրագրին համաձայն: Մեզի կը մնայ միայն համբերութեամբ եւ ամբողջական վարահոյութեամբ Աստուծոյ ապաւինելու, որովհետեւ այլապէս Անոր ձեռքին բաժակ մը կայ՝ բարկութեան թունդ գինիով լեցուն, որ խմել պիտի տայ ամբարիշտներուն: Ուրեմն, Աստուծոյ երկիրը ունենալու, Աստուծմէ վախ-նալու, եւ Աստուծմէ վախնալ կը նշանակէ հեռու մնալ չարէն, այլ՝ խօսքով հեռու մնալ հպարտութենէն: Առակաց գիրքը այնքան պարզ ու յարակ կը ներկայացնէ ըսելով. «Իմաստութեան սկիզբը Տիրոջ վախն է»: Այսինքն՝ էթէ կ'ուզենք իմաստութիւնը ունենալ, Աստուծմէ պէք է վախնանք, Սաղմոսին մէջ կ'ըսէ. «Տիրոջմէ վախնալ կը նշանակէ չարէն հեռու մնալ»: Իսկ Դրախարի պարտեզին մէջ այսպէս կարծուած իմաստութիւնը ունենալու պարտաւկով՝ Եւան ալանջ տուաւ Չարին: Տակաւին, Սաղմոսին մէջ կը կարդանք. «Յիմարները չեն գիտեր, անմիտները չեն հասկնար, թէ՛ նոյնիսկ էթէ ամբարիշտները խորի նման կը բուսնին, անիրաւ գործ ընողները յաջողութիւն կը գտնեն, եւ սակայն ընդմիշտ պիտի կորսուին: Իսկ Դուն, ով Տէր, յաւեր կ'իշխես բոլորին» 92:6-8: Տիրոջ ձեռքին մէջ եղած բաժակը բարկութեան բաժակն է: Ահա այդ բարկութեան բաժակը Քրիստոս խմեց, որուն համար ալ աղօթեց Գեթսեմանի պարտեզին մէջ, «Հեռացոր ինձմէ այդ բաժակը, բայց էթէ Քու կամքդ է որ խմեմ, թող որ խմեմ»: Ուրեմն, Քրիստոս խմեց այդ բաժակէն, իսկ հիմա ով որ կը հաւարայ ու կ'ընդունի Յիսուս Քրիստոսը Տէր եւ փրկիչ, այդ բաժակէն խմել չկայ, իսկ անոնք որոնք տակաւին կը շարունակեն, ու պիտի շարունակեն մնալ իրենց ամբարշտութեան մէջ, անոնք պիտի խմեն այդ բաժակէն: Եթէ ունինք մեր մէջ տակաւին հպարտութեան գիծեր, առիթն է խոստովանելու եւ խնդրելու մեր Տէր ու փրկիչ Յիսուս Քրիստոսէն որ հեռացնէ մեզմէ այդ հպարտութիւնը, ամբարշտութիւնը, որպէսզի աւարտին չխմենք այդ բաժակէն:

Իսկ գալով Ասա՛քին, որպէսզի հեռու մնայ հպարտութեան մեղքէն, անդադար ներքող պիտի երգէ Աստուծոյ: Մնայուն շնորհակալութիւն յայտնելու եւ Աստուծոյ սուրբ անունը փարաբանելու: Միայն թէ մեքենական ջրլայ, այլ ի սրտէ, ինչպէս պիտի ըսէ Սաղմոս 111, «Ամբողջ սրտովս կ'ուզեմ Քեզի գոհութիւն յայտնել, Տէր», եւ ամբողջութեամբ վարահելու Իրեն:

Եկէք, հետեւաբար, այս դժուարին պայմաններուն մէջ, որ կ'ապրինք այսօր, եւ համայն մարդկութիւնը, նախ փառք տանք Աստուծոյ, Իր տուած բոլոր բարիքներուն համար, հեռու մնանք հպարտութենէ, եւ ամբողջութեամբ Իրեն վարահինք, որովհետեւ ինչ ալ ըլլանք պարագաներն ու պայմանները, աւարտին Աստուած Ինք է Դաբաստորը: Ուստի, Պօղոս Առաքեալի բառերով. «Եթէ Աստուած մեր կողմն է, ով կրնայ մեզի հակառակ ըլլալ»:

Պահապան ամենայնի Քրիստոս,
աջ ին հովանի լիցի ի վերայ իմ ի տուէ եւ ի գիշերի,
ի նստիլ ի տան, ի գնալ ի նանապարհ,
ի ննջել եւ ի յառնել, զի մ'ի երբեք սասանեցայց.
եւ ողորմեա՛ ին արարածոց եւ ինձ բազմամեղիս: